Սևծովյան ավազանի հյուսիս-արևմտյան շրջանների շրջակա միջավայրի պահպանության վերլուծության նորարարական գործիքներ

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ ՝	Էկոլոգիա
Տևողություն ՝	18 ամիս
Իրականացման ժամանակահատված ՝	հուլիս 2013 – հունվար 2015
Ընդհանուր բյուջե ՝	769,265 եվրո
ՀՀ շահառու հաստատություն՝	«Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ
Մասնակից երկրներ՝	Ռումինիա, Մոլդովա, Ուկրաինա, Հայաստան,

Ծրագրի նկարագրություն

Ընդհանուր նպատակները ՝ Աջակցել կայուն բնապահպանական քաղաքականության զարգացմանը՝ տեղայնացնելով մակերեսային ջրային համակարգերի ֆիզիկա-քիմիական և կենսաբանական պարամետրերի վերլուծության, մոնիթորինգի և զննման նորարարական հետազոտական նախաձեռնությունները Սև ծովի հյուսիս-արևմտյան ավազանում:

Հեռք բերված արդյունքները՝

- Ծրագրի մասնակից երկրների բնապահպանական ուղղվածություն ունեցող կառույցների և մասնագետների միջև հաստատվել է կայուն համագործակցություն Սևծովյան ավազանի հյուսիսարևմտյան հատվածի մակերևութային ջրային համակարգերի ուսումնասիրման ժամանակակից գործիքների, մեթոդաբանության և ալ մասնագիտական հարցերի շուրջ,
- Կազմակերպվել են դասընթացներ տարբեր մասնագիտական թեմաներով՝ ծրագրի մասնակից երկրներից փորձագետների մասնակցությամբ՝ այդպիսով կատարելագործելով մասնակիցների հմտությունները, խթանելով գիտնականների միջև համագործակցության, կարծիքների և տեսակետների փոխանակումը,
- Իրականացվել են միջոցառումներ՝ ուղղված Սևծովյան ավազանի հյուսիսարևմտյան հատվածի մակերևութային ջրային համակարգերում աղտոտող նյութեր հայտնաբերելու ժամանակակից մեթոդների օգտագործման, հետազոտական

նախաձեռնությունների համար ժամանակակից մոտեցումների ստեղծման և կիրառման գաղափարների տարածմանը:

Հավելյալ տեղեկատվություն

Սևծովյան ավազանի հյուսիս-արևմտյան շրջանների շրջակա միջավայրի պահպանության վերլուծության նորարարական գործիքներ (http://blacksea-cbc.net/wp-content/uploads/2015/12/fact-sheet-MIS-1475.pdf)